

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակագրական հոդվածի փաստական նյութի հիման վրա

Ներկա հոդվածի հիմքում ընկած է այն համընդհանուր դրույթը, որ տեքստը որպես խոսքային ստեղծագործության արդյունք լեզվական հաղորդակցության /տե՛ս 7; 9/, ինչպես նաև հոգեբանական-խոսքային և գործաբանական բնույթի միավոր է /10, 36/:

Հարկ է նշել, որ լեզվական հաղորդակցությունը բավականին բարդ ու բազմատարր մի ամբողջություն է, որտեղ զուտ լեզվական ոլորտի ուսումնասիրությունները համակցվում են արտալեզվական ուսումնասիրություններին՝ անմիջական մասնակցություն ունենալով տեքստի կազմակերպման մեջ: Իսկ տեքստը հանդես է գալիս որպես հասցեագրողի կողմից կողավորված տեղեկատվություն, որը ենթարկվում է հասցեատիրոջ ապակողավորմանը: Կապված տեքստի հաղորդակցական հայեցակերպի հետ՝ վերլուծության մեջ ի հայտ է գալիս նաև մեկ այլ լեզվաբանական գիտակարգ՝ տեքստի գործաբանությունը:

Տեքստի գործաբանությունը բավականին ընդգրկուն իսակացություն է, սակայն միևնույն ժամանակ նույնքան էլ անմիանշանակ: Այն իր շրջանակներում ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են՝

ա/ տեքստի գործաբանություն բուն իմաստով, այսինքն՝ ցանկացած տեքստի այն անհրաժեշտ յուրահատկությունը, որը մատնանշում է հասցեագրողի վերաբերմունքը հաղորդակցման օբյեկտի, ինքնին հաղորդակցման ակտի և վերջինիս միջոցով հասցեատիրոջ հանդեպ, բ/ հասցեագրող /հեղինակ/ և հասցեատեր, գ/ տեքստի գործաբանական նպատակադրություն և դ/ ծրագրավորվող գործաբանական ներգործություն:

Այս կապակցությամբ Վ.Լ.Նաները միանգամայն արդարացիորեն գրում է. «Տեքստի գործաբանությունն՝ իր ամբողջ էությամբ հանդերձ հիմնված է

ներգործման գործառույթի վրա, որն ապահովվում է տեքստի համապատասխան կառուցվածքային մասնատմամբ, ասույթային և վերասույթային մակարդակներում առկայական տրոհման բնույթով ու որոշ այլ միջոցներով և ամենից շատ այն գործաբանական բովանդակությամբ, որը կարգավորում է բովանդակության իմաստային կողմի ընկալման տեսանկյունը, ինչպես նաև տեղեկություն է կրում արդեն ոչ թե արտաքին աշխարհի /հաղորդակցման օբյեկտի/, այլ հաղորդակցման ակտի մասնակիցների հասցեագրողի և հասցեատիրոջ մասին: Այս ամենն է, որ մեկ ամբողջություն դարձած՝ ապահովում է համապատասխան ազդեցությունը, հասցեատիրոջ կողմից տեքստի բովանդակության ապակողավորման շնորհիվ բացահայտում գործաբանական այն նպատակադրությունը, որն ընկած է տեքստի հիմքում» /9, 11/:

Արդի լեզվաոճաբանության մեջ մշակվող խնդիրների շարքում գրական լեզվի գործառնական տարատեսակների ուսումնասիրությունները որոշակի կարևորություն են ձեռք բերել: Այնպիսի գործառնական ոճերի լեզվական, ժանրային, կառուցվածքային, արտահայտչական և այլ առանձնահատկությունները, ինչպիսիք են գեղարվեստական արձակ ու չափածո ոճը, վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական ու լրագրային ոճերը, դարձել են բազմաթիվ դասագրքերի, հոդվածների, ժողովածուների ու մենագրությունների /այդ թվում նաև ատենախոսությունների/ հետազոտության օբյեկտը /տե՛ս 2; 3; 5; 6; 11/:

Ուսումնասիրությունները փաստում են, որ գրական լեզվի տարատեսակներից լրագրային ոճն է աչքի ընկնում իր ընթերցողների ընդգրկման ծավալով, քանի որ նրան հատուկ են հստակ արտահայտված հաղորդակցական նպատակներն ու ընդգծված գործաբանական ուղղվածությունը: Սա է պատճառը, որ տեքստի ապակողավորման հարցում լրագրային տեքստերը հիմնականում ապահովում են առավելագույն պայմաններ:

Լրագրային ոճի հիմնական նպատակն ընթերցողին տեղեկատվությամբ ապահովելու, նրա վրա ներգործելու, նրանում

համապատասխան աշխարհայացք ձևավորելու և հասարակական-քաղաքական գիտակցության մղելու առանձնահատկություններն են /տե՛ս 1; 4/:

Սույն հետազոտության թիրախ է դարձել ժամանակագրական հոդվածի ժանրը:

ժամանակագրական հոդվածը տեղեկատվության պարզ ձևերից մեկն է, որը սովորաբար սեղմ տեղեկատվություն է պարունակում՝ ընդգրկելով որևէ կարևոր նորություն: Այս ժանրի հիմնական տարբերակիչ գիծը կայանում է նրանում, որ այն ներկայացնում է միայն ամենաթարմ ու նոր փաստերը՝ զերծ մնալով մանրամասնություններից:

ժամանակագրական հոդվածների խնդիրը փաստերի ներկայացումն է, այլ ոչ թե վերջիններիս նկարագրությունը կամ մեկնաբանությունը: Այս առանձնահատկությամբ հանդերձ՝ ժանրի խնդրով է պայմանավորվում նրա յուրահատուկ ոճական գծերից մեկը՝ լակոնիզմը: Ավելորդ բառերն ու արտահայտությունները, շարահյուսական կառույցները դիտվում են որպես սովալ ժանրի թերություն և տեղեկատվության նորմերի խախտում:

ժամանակագրության լեզվի հաղորդակցական գործառույթը հանդես է գալիս իր ուղիղ ձևով՝ ընդգծված ու հստակ և ընթերցողից չի պահանջում ավելորդ խորհրդածություն ու հուզական լարում: Այստեղ կարևորվում է ոչ թե բառիմաստի խորամուխ լինելը, նրա իմաստաբանական միջուկի բացահայտումը, բովանդակության տրամաբանական ընկալունակությունը, ինչպես օրինակ՝ գիտական ոճում, ոչ թե գեղագիտական երանգավորումներն ու նրբիմաստները, որոնք շերտավորվում են բառի անվանական իմաստի վրա, ինչպես գեղարվեստական գրականության մեջ, այլև՝ անմիջական լրատվությունը:

ժամանակագրական հոդվածն աչքի է ընկնում հաղորդվող նյութի հրատապությամբ, պաշտոնականությամբ, ու հեղինակային խոսքի անդեմությամբ, որի մասին է վկայում ժանրի չեզոք ու կաղապարված լեզուն և պաշտոնական ոճի ակնհայտ ներգործությունը: Այս ընդհանուր գծերը հուշում են նաև ժամանակագրության հստակ արտահայտված հաղորդակցական ու գործարանական նպատակադրության մասին, այն է՝ հաղորդել առավելագույն տեղեկատվություն չափազանց սեղմ տեքստային հատվածում:

«Հասցեագրողի /հեղինակի/ վարքագծում առկա են երկու ծայրահեղություն. կամ շարադրանքն ամբողջապես օբյեկտիվ է և նրանից անհնար է որևէ տեղեկություն քաղել հեղինակի մասին կամ ամբողջ շարադրանքը կապված է հեղինակի հետ» /8, 299/: Ժամանակագրության ժանրում, ըստ երևույթին, դրսևորվում է առաջին տարբերակը. քանի որ այստեղ բացառվում է տեքստի հեղինակի /տվյալ դեպքում հողվածագրի/ անհատականությանը բնորոշ գծերի ի հայտ գալը: Սակայն նման տեքստերի արտաքին կառուցվածքի տրոհումը տալիս է միանգամայն այլ պատկեր:

French train fireball kills 12

TWELVE people were killed and 39 injured when a train rammed into a fuel truck at an automatic rail crossing in France, engulfing the train in flames. At least eight of the injured were said to be in a critical condition.

The train, travelling from Bordeaux to Bergerac in south-western France, ploughed into the fully laden truck in the town of Sainte-Antoine du Breuilh.

Local officials said the truck's cab slammed into a house while the tanker was dragged along by the train before its 30.000 litres of petrol burst into flames (*The Guardian, September 9, 1997*).

Սույն հողվածը ներառում է երեք առավելագույնս սեղմ պարբերություն /այդ թվում նաև տեքստի վերնագիրը/ և դասվում փոքրածավալ հաղորդագրական հողվածների թվին: Ակներև է, որ տեքստում առկա չէ ներկայացված իրադարձությունների ու երևույթների հեղինակային վերաիմաստավորում և անհատական երանգավորում: Սա պայմանավորված է նրանով, որ հաղորդագրությունն աչքի է ընկնում իր հրատապությամբ, և վերջինիս համար առաջնակարգ կարևորություն է ներկայացնում անմիջական լրատվությունը:

Ակնբախ է այն փաստը, որ ներկայացված ոչ մի նախադասություն չի պարունակում զնահատողական ոչ մի տարր: Տեքստում հեղինակը զետեղել է փաստացի տեղեկատվություն:

Կառուցվածքային առումով վերոհիշյալ հաղորդագրությունը չունի տեքստային ավանդական կառուցվածքին բնորոշ այն տարրերը, որոնք մեծ կարևորություն են ներկայացնում տեքստային տեղեկատվության ընդհանուր ամբողջացման համար: Ակներև է, որ հոդվածը զերծ է տեքստային կառուցվածքին հատուկ դասական նախաբանից ներքին հիմնակմախքից ու վերջաբանից:

Հոդվածի վերջին հատվածը /չորրորդ պարբերություն/, ամբողջապես չի սպառում ընդհանուր շարադրանքը, այլ պարզապես հաղորդում է լրացուցիչ տեղեկություն առկա պատահարի վերաբերյալ /Local officials said the truck's cab slammed into a house while the tanker was dragged along by the train before its 30,000 litres of petrol burst into flames./:

Տեքստի վերնագիրն ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում ամբողջ հաղորդագրության հակիրճ բովանդակությունը: Վերջինս նպատակահարմար է դասել «վերնագիր-հաղորդագրություն» շարքին /տե՛ս 7/: Սա է պատճառը, որ «French», «train», «fireball», «kills 12» միավորները կազմում են տվյալ հաղորդագրության իմաստաբանական դաշտը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ հաղորդագրությունը հարուստ է թվերով /«12», «39», «eight», «30, 000»/ և վերջինս մեկ անգամ ևս ապացուցում է տեքստում փաստացի տեղեկատվության առկայության մասին:

Այսպիսով, տվյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ունի հնարավորին չափ պարզ կառուցվածք և պարունակում է միայն փաստացի տեղեկատվություն: Վերջինս բացատրվում է զնահատողական տարրերի ու հեղինակային անհատական եղանակավորման, ինչպես նաև հայեցակարգային տեսակետների բացակայությամբ, հուզականորեն չեզոք բառապաշարի, թվերի առատ կիրառության, շարահյուսության տեսանկյունից նախադասությունների ուղիղ շարադասության առկայությամբ: Եվ ավելին, տեքստում զետեղված ոչ մի բառային միավոր չի պարունակում որոշակի ռճական երանգավորում:

Վերոհիշյալ բոլոր հանգամանքները հիմք են ծառայում, որպեսզի սույն հոդվածը վերագրվի այն հաղորդագրությունների թվին, որոնք ունեն առաջնակարգ և հրատապ բնույթ: Սրանով հանդերձ պարզ են դառնում նաև տեքստի գործաբանական խնդիրները, այսինքն տեղեկատվությունը մատուցվում է հասցեատիրոջն անմիջական կերպով, առանց որևէ խոչընդոտների, և տեքստի ապակողմամբ համար հասցեատիրոջից չի պահանջվում ավելորդ խորհրդածություն կամ լարում: Հենց այս գործաբանական նպատակով է հոդվածագիրը խախտում տեքստի ավանդական կառուցվածքային սկզբունքները և տեղեկատվության մատուցման հաջորդականությունը, որով բնորոշվում են տվյալ տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները:

Ընթերցողի ուշադրությունը գրավելու և առավել ևս լարված պահելու գործաբանական նպատակներով տեղի է ունեցել տեղեկատվական տեղաշարժ պատահարի փաստի և նրա արդյունքների ներկայացման միջև: Այս տեղաշարժը լիովին պատճառաբանված է թվում, քանի որ ընթերցողի ուշադրությունը գրավելու պարագայում առաջին պարբերությունն արտացոլում է առկա պատահարի արդյունքները /Twelve people were killed and 39 injured/, իսկ վերջիններս տեքստի գործաբանության առումով առավել ցայտուն են, քան ինքնին փաստը /The train...ploughed into a fully laden truck...engulfing the train in flames/:

Ասվածից հետևում է, որ իրադարձության հետևանքը հոգեբանական տեսանկյունից ավելի ազդեցիկ է, քան պատճառը: Սա հիմք է հանդիսանում, որպեսզի վթարի հետևանքը լուսաբանող հատվածը դառնա տեքստի վերնագրին հաջորդող առաջին պարբերությունը: Ահա թե ինչու տեքստի վերնագիրը դառնում է առաջին պարբերություն, որին անմիջապես հետևում է այն բացահայտող արդյունքների պատկերը և հետո միայն ներկայացվում փաստերը պատահարի պատճառի մասին: Վերջիններս արտացոլված են առաջին և երկրորդ պարբերություններում:

Տվյալ տեքստային ամբողջության մեջ մեծ դեր է կատարում վերնագիրը /զերթեմա/, քանի որ վերջինս համարվում է նաև այդ ամբողջության նախաբանը և պարունակում է բավականաչափ սեղմ տեղեկատվություն

հետագա շարադրման վերաբերյալ: Վերնագիրը նաև հասցեատիրոջը գրավելու առաջնակարգ լեզվական ազդանշանն ու տեղեկատվական դաշտն է:

Այսպիսով, սույն ուսումնասիրությունը գալիս է հաստատելու՝

1. Ժամանակագրական հոդվածը լրագրային տեղեկատվության ամենատարածված ժանրն է, որն աչքի է ընկնում շարադրանքի սեղմությամբ, ունի հստակ արտահայտված հաղորդակցական ու գործարանական նպատակներ և ընթերցողից պահանջում է սահմանափակ ժամանակ: Այստեղ տեքստի ապակոդավորման հարցում համեմատաբար քիչ խնդիրներ կան, ինչը պայմանավորված է ժանրի մատչելի լեզվով /ընթերցողի տվյալ լեզվական կողի իմացությամբ/, տեքստային պարզ կառուցվածքով և լեզվի կանոնակարգվածությամբ ու նորմատիվությամբ:

Նման հոդվածներում գերիշխող դերը պատկանում է ընդգծված պաշտոնական ոճին ու գրքային-գրավոր բնույթին: Սա էլ իր հերթին վկայում է ժամանակագրական հոդվածների ստանդարտայնության ու կադապարացման մասին:

2. Ժամանակագրական հոդվածում, որպես կանոն, իշխող դերը պատկանում է փաստացի տեղեկատվության տարատեսակին և նրա ներքին կառուցվածքում գրեթե բացառվում են հեղինակային անհատական երանգավորման ու զնահատողական տարրերը, ինչպես նաև հայեցակարգային ու ենթատեքստային տեղեկատվության տարատեսակները: Սակայն տեքստի արտաքին կառուցվածքի գործաբանական-հաղորդակցական հայեցակերպի քննությունը տալիս է միանգամայն այլ պատկեր:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր տեքստ ստեղծվում է որոշակի հեղինակի կողմից և նրան է վերապահված տեքստի կառուցումն ու ձևավորումը, իսկ սա, բնականաբար, ենթադրում է տեքստում հեղինակի բացահայտ կամ քաջնված առկայության մասին:

Ժամանակագրական հոդվածում այդ առկայությունը, ըստ երևույթին, դրսևորվում է քաջնված կերպով:

Վերլուծության ենթարկվող հոդվածի կառուցվածքը ցույց է տալիս, որ տեքստի գործաբանական խնդիրների ներքո, այնուամենայնիվ, ի հայտ են գալիս թե՛ հեղինակային եղանակավորությունը, և թե՛ հայեցակարգային

միտումները: Սա բացատրվում է այսօրինակ փոքրածավալ տեքստային ամբողջության մեջ տեղեկատվության յուրօրինակ դասավորությամբ, տեքստային ավանդական կառուցվածքի տեղաշարժով ու փաստերի ներկայացման ինքնատիպ եղանակներով: Տվյալ դեպքում հեղինակի խնդիրն այն է, որ որոշի, թե ինչ մղի տեքստի առաջին պլան և դրան համապատասխան ինչպիսի կառուցվածքային ձև ընտրի:

3. Տեքստի հաղորդակցական խնդիրներին լուծում տալու նպատակով ստեղծագործության հեղինակը կարող է թույլ տալ կառուցվածքային «շեղումներ»՝ խախտելով տեքստի դասական մոդելը, տեղեկատվության մատուցման հաջորդականությունը, առանձնացնել ու առաջնային համարել առավել ցայտուն ու զրավիչ հատվածներ, տեղաշարժել ամբողջական պարբերություններ և այլն: Իսկ այս ամենը կատարվում է շնորհիվ այն բանի, որ հեղինակը գործադրում է ցանկացած միջոց, որպեսզի ընթերցողի ուշադրությանն արժանացնի իր ստեղծագործությունը: Սա է պատճառը, որ նմանօրինակ փոքրածավալ տեքստերում «նախաբան-հիմնամաս-վերջաբան» կառուցվածքային տարրերը չեն պահպանվում կամ պարզապես ձեռք են բերում խառը դասավորություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շալունց Ռ. Ն. Մամուլի և հրապարակախոսության լեզուն: - Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1987.
2. Ջահուկյան Գ. Բ., Խլղաթյան Ֆ. Գ. Հայոց լեզու: Հանրակրթ. դպր. 9-10-րդ դաս. համար: - Ե.: Լույս, 1994.
3. Ջրբաշյան Է. Մ. Գրական ժանրերի հիմնական չափանիշների մասին / ԲԵՀ. - Ե., 1970.-ՈՅ.
4. Вакуров В. Н. и др. Стилистика газетных жанров. - М.: Высш. школа, 1978.
5. Васильева А. Н. О целостном комплексе стилеопределяющих факторов на уровне макростилей // Функциональная

- стилистика: теория стилей и их языковая реализация: Межвуз. сб. науч. тр. / Перм. ун-т. — Пермь, 1986.
6. Гавранек Б. О функциональном расслоении литературного языка // Пражский лингвистический кружок: Сб. статей / Ред. Н. А. Кондрашова. — М.: Прогресс, 1967.
 7. Гальперин И. Р. Текст как объект лингвистического исследования. — М.: Наука, 1981.
 8. Джаукян Г. Б. Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике. — М., 1999.
 9. Колшанский Г. В. Текст как единство коммуникации // Проблемы общего и германского языкознания. — М.: Изд-во МГУ, 1978.
 10. Наер В. Л. Прагматика текста и ее составляющие // Прагматика и стилистика. — Вып. 245. — М., 1985.
 11. Разинкина Н. М. Функциональная стилистика английского языка. — М.: Высш. школа, 1989.